



Ունկնդրեցե՛ք ՌԱՏԻՕ ՍԵՒՎՆ-ը

Լիբանանի բոլոր շրջաններում մեջ, հետեւեալ ալիքներում վրայ  
\* Լիբանանի եւ Սուրիոյ ծովեզերեայ շրջաններում, Լեռնալիբանանի, Պեքալի, Սայտալի եւ Թրիփոլիի մեջ՝ 101.5 FM ալիքին վրայ:  
\* Հիւսիսային Լիբանանի մնացեալ շրջաններում մեջ 101.3 FM ալիքին վրայ:  
\* Պէյրուսի եւ Լեռնալիբանանի մեջ Լատե՝ 90.8 FM ալիքին վրայ:

Ֆեռ.: 01-567161-2-3

Fax: 01-567168

\* Cablevision 11700 GHz digital.

\* Կայքէջ: www.radiosevan.com

## ՆԱԽԱԳԱՅ ԱԸԼԵՅՄԱՆ ՄԵԿՆԵՑԱԲ ԹՈՒՐՔԻԱ

Հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյման երէկ առաւօտեան մէկօրեայ պաշտօնական հրատարակած մը մեկնեցաւ Թուրքիա: Նախագահ Սըլէյման սկզբունքով այսօր՝ Չորեքշաբթի պիտի վերադառնայ Պէյրուս: Հանրապետութեան նախագահին գլխաւորած պատուիրակութեան մաս կը կազմեն Ներքին գործոց նախարար Չիատ Պարուտը, արտաքին գործոց նախարար Ֆաուզի Սալուխը, եւ գաղթականաց հարցերու նախարար Ռեմոն Աուսէն:

## «ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄՆ ՄԱՄՆԱԿՅԻԼԸ ԻՐԱՎՈՒՄՆԵՔ Է» Կ'ԸՍԷ ՄԻՆԻՐԱԿ

Վարչապետ Ֆուատ Սիւնիորա Սայտայի մէջ հանդիպում մը ունեցաւ կրթական եւ բարձրագոյն ուսման նախարար Պահիա Հարիրիի հետ: Ժողովը զննեց արտաքին գործերու առջեւ խօսք առնելով, Սիւնիորա շեշտեց, որ կառավարութիւնը աշխուժ է որ խորհրդարանի ընտրութիւնները կայանան ազատ եւ թափանցիկ պայմաններու տակ:

Սիւնիորա շեշտեց, որ ընտրութիւններու մասնակցութիւնը իւրաքանչիւր քաղաքացիի իրաւունքն ու պարտքն է միաժամանակ:

Նախքան իր Սայտա մեկնիլը վարչապետ Ֆուատ Սիւնիորա այցելեց խորհրդարան ու հանդիպում մը ունեցաւ Նեպիի Պըրրիի հետ: Ան յայտնեց, թէ կառավարութիւնը որոշած էր չվերանայիլ պենզինի սակին, հետեւաբար պենզինի սակը սուրազնելու մասին խօսքերը անհետեւ էին:

## ՍՍՏԻՔԻ ՀԵՏՔԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ ԱՆՈՐԾ

Արաբական Սիւնիորա միջոցով Սիւնիորա Սիւնիորայի ընտրութիւններու ոստիկանութիւնը պաշտօնապէս հաղորդեց, թէ իրագրել չէր Ռաֆիք Հարիրիի սպանութեան գըլխաւոր վկաներէն Չուհէր Սատիքի ձեռքարկութեան իրողութեան: Սոյն հաղորդագրութիւնը անուղղակի պատասխան մըն էր այն տարածայնութիւններուն, թէ՛ ընդառաջելով սուրիական եւ լիբանանեան իշխանութիւններու կոչերուն, Արաբական Սիւնիորա միջոցով Սիւնիորայի ընտրութիւններու գաղտնի սպասարկութիւնը յաջողած էր ձեռքարկել Սատիքը: Այս մասին խօսելով, Սիւնիորա Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան խօսնակ մը ընդգծեց, թէ Ռաշիդին տեղեակ պահուած չէր Սատիքի ձեռքարկութեան մասին, եւ չէր խորհեր, թէ վերջինս ձեռքարկուած ըլլար:

## ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ՆԻՍՏԸ ՄԱՅԻՍ 7-ԻՆ

Լիբանանի խորհրդարանը երէկ կէսօրին սկսաւ գումարել օրէնսդիր նիստ մը: Նշենք, թէ նախապէս՝ երեք առիթներով, խորհրդարանի նախագահը անհրաժեշտ մեծամասնութիւն չգոյնաւորելու պատճառաւ, նիստը առկախած էր, ճշդելով նոր թուական մը: Դժբախտաբար, խորհրդարանի նիստին բացումը կատարուելէ վայրկեաններ ետք, մեծ թիւով երեսփոխաններ լքեցին սրահը, հետեւաբար՝ խորհրդարանի նախագահին կը մնար չորրորդ անգամ ըլլալով յետաձգել նիստը, յաջորդ նիստին համար թուական ճշդելով Մայիս 7-ը:

## ՀԱՐԻՐԻ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՔԱՐԻ ԸՆՏՐԱՑՄԱՆԿԸ

Նախկին վարչապետ Նեպի Սիւնիորա, Թրիփոլի իր բնակարանին մէջ ընդունեց Մուսաբաբալ Հոսանքի նախագահ Սաատ Հարիրիին եւ անոր հետ բնմարկեց երկրին վերջին իրադարձութիւնները, ինչպէս նաեւ ընտրական մթնոլորտը:

Մուսաբաբալ Հոսանքի խորհրդարանական խմբաւորումի նախագահ Սաատ Հարիրի կա յայտնեց, որ կարգ մը ուժեր ցլ փորձեն խանգարել Մուսաբաբալ Հոսանքիին եւ արաբական ծագումով կարգ մը հատուածներու միջեւ պատմական յարաբերութիւնները:

## ԸՆՏՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

«Ժամաա Իսլամիէ» կազմակերպութեան քաղաքական դիւանի նախագահ շէյխ Ալի Ամար յայտնեց, թէ բանակցութիւնները խզուած չեն Մուսաբաբալ Հոսանքիին հետ, սակայն միաժամանակ որեւէ արդիւնքի հասած չեն տակաւին: Շէյխ Ամար ըսաւ, թէ յառաջիկայ 24 ժամերը վճռական պիտի ըլլան իր կազմակերպութեան համար, անցնելով, որ ստեղծուած կացութիւնը կը թելադրէ, որ «Ժամաա»ի թեկնածուները առանձին մղեն ընտրապայքարը:

Պէյրուսի առաջին ընտրամասէն, հայ կաթողիկէ համայնքի թեկնածու Մեթր Սեթր Թուրսարգիսեան յայտարարեց, թէ պատճառ մը չունէր ետդարձ կատարելու իր թեկնածութենէն, որովհետեւ անիկա կը վայելէր Մարտ 14-ի ուժերուն եւ առաւել եւս Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան եւ այլ քաղաքական կուսակցութիւններու եւ հոսանքներու զօրակցութիւնը: Երեսփոխան Մեթր Թուրսարգիսեան ըսաւ, թէ ընտրապայքարը միջեւ անարտը պիտի շարունակէր:

«Փոփոխութիւն եւ Բարեկարգում» խորհրդարանական խմբաւորումի անդամ Նեպի Սիւնիորա ըսաւ, թէ ընդդիմութեան Մեթի ընտրաշրջանի ցակը ամենաուշը՝ Հիւզարթի օր պիտի յայտարարուի:

Լիբանան-Սուրիա գերագոյն խորհուրդի նախագահ Նասրի Խուրի ըսաւ, թէ Դամասկոսի եւ Պէյրուսի միջեւ դեպքանատուներու փոխանակումը դրական քայլ մը կը նկատուէր երկու երկիրներուն փոխ յարաբերութիւններուն մէջ: Խուրի մաղթեց, որ դեպքանատուներու փոխանակումով՝ նոր էջ մը կը բացուէր երկու երկիրներուն պատմութեան մէջ: Միւս կողմէ, սուրիական աղբիւրներ հաւաստեցին, թէ Լիբանանի մօտ նշանակուած Սուրիոյ դեպքանատուներու ամիս ժամանակամիջոցի կը կարօտէր Լիբանան ժամանելու եւ իր պարտականութիւնները լիուրի ստանձնելու համար:

Երեսփոխան Աքրամ Շիքէյաբ հարց տուաւ, թէ ի՞նչ անհրաժեշտութիւն կար Լիբանան ՎՆ Սուրիա գերագոյն խորհուրդին շարունակութեան, երբ երկու երկիրներուն միջեւ տեղի ունեցած էր դեսպաններու փոխանակութիւն:

## ՄԵԹՐ ՍԵՐԺ ԹՈՒՐՍԱՐԳԻՍԵԱՆ Ս.Գ.Հ.Կ.-Ի ԹԵԿՆԱԾՈՒ

Ս.Գ.Հնչակեան կուսակցութեան Լիբանանի Երջանի Վարիչ Մարմինը կը յայտարարէ թէ յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն համար Պէյրուսի երկրորդ ընտրաշրջանի իր թեկնածուին Ընկ. Մեպուհ Գալիպեանին կողքին, Պէյրուսի առաջին ընտրաշրջանի մէջ կ'առաջադրէ Մեթր Սեթր Թուրսարգիսեանի թեկնածութիւնը:



Ս.Գ.Հ.Կ. Լիբանանի Երջանի Վարիչ Մարմին

## ՀԱՆԳԻՊՈՒՄ Ս.Գ.Հ.Կ.Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐՈՒՆ ԵՒ ԵՐԵՄՓՈՒՄԱՆ ՄԻՇԷԼ ՖԱՐՍՈՆԻ ՄԻՋԵՒ



Ս.Գ.Հնչակեան կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխատրութեամբ Ս.Գ.Հ.Կ. Վարիչ Մարմինի ատենակապետ Ընկ. Տոքթ. Մարտիկ Ժամկոչեանին եւ ընկերակցութեամբ երեսփոխան Ընկ. Տոքթ. Եղիկ Ճէրեմեանին, երեսփոխանի եւ յառաջիկայ երեսփոխանական ընտրութեան Պէյրուսի Ա. ընտրաշրջանի Հայ Կաթողիկէ աթոռին Ս.Գ.Հ.Կ.-ի թեկնածու Մեթր Սեթր Թուրսարգիսեանին Պէյրուսի Բ. ընտրաշրջանի Ս.Գ.Հ.Կ. թեկնածու Ընկ. Մեպուհ Գալիպեանին եւ Ս.Գ.Հ.Կ. քարոզչական դիւանի պատասխանատու Ընկ. Ալեք Քեօշկեանին, հանդիպում ունեցան երեսփոխանի եւ Պէյրուսի Ա. ընտրաշրջանի կաթողիկէ աթոռին թեկնածու Միշէլ Ֆարսոնի հետ:

Խօսակցութիւնը կեդրոնացաւ յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններու մանրամասնութիւններուն շուրջ: Ս.Գ.Հ.Կ. Վարիչ Մարմին ընկերները Միշէլ Ֆարսոնին ներկայացուցին կուսակցութեան թեկնածուները ու նաեւ յայտնեցին կուսակցութեան ամբողջական նեցուկը Պէյրուսի Ա. ընտրաշրջանի Հայ Առաքելական աթոռին ՌԱԿԻ թեկնածու նախարար Ժան Օդասապեանին:

## ԵԳԻՊՏՈՍԻ ԵՒ ՀԸՂՊԱԼԱՅԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԳԵՊԻ ՄՍԳԼՈՒՄ

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղարի գրասենեակին տնօրէն Հիշէմ Եուսէֆ ըսաւ, թէ Արաբական Լիկան նախանձախնդիր է, որ Հիւզարթի թղթածրարը լուծուի հանդարտ եւ իրաւական սահմաններու մէջ: Եուսէֆ նշեց, թէ կացութիւնը իսկապէս շատ նուրբ էր: Եգիպտացի դիւանագետը ընդգծեց, թէ Հիւզարթի հովանաւորութիւնը վայելող բացայայտուած ընդդիմութեան կազմակերպութեան անդամներուն կատարած խոստովանութիւնները ցնցիչ էին: Իրաւական գետնի վրայ, Եգիպտոսի փաստաբաններու Միութիւնը ատենաւէն պահանջեց դադարեցնել երկրին տարածութեան վրայ, Հիւզարթի պատկան «Ալ Մանար» հեռատեսիլի կայանին սփռումները: Միւս կողմէ, Եգիպտական կառավարական աղբիւրներ նշեցին, թէ Հիւզարթի ցնցիչ բացայայտումը որեւէ ազդեցութիւն պիտի չունենայ Լիբանանի հետ

Եգիպտոսի փոխ յարաբերութիւններուն վրայ, որովհետեւ Եգիպտոս լաւատեղեակ է, որ լիբանանեան իշխանութիւնները ի վիճակի չեն օրինականութիւնը պարտադրելու: Հիւզարթի վրայ: Եգիպտոսի խորհրդարանը կառավարութեան պահանջեց հարցաքննութեան թղթածրարը գիտութեան ատենախն յանձնել, եւ գիտութեան ատենախն ստանձնէր դատավարութիւնը, որովհետեւ ընդդիմութեան կազմակերպութեան գործողութիւնները ուղղուած էին երկրին ազգային անվտանգութեան դէմ: Այս գայթակղութեան զուգահեռ, Եգիպտական իշխանութիւնները հաստատեցին լիբանանեան սպահովական կարգ մը կառոյցներու մասնակցութիւնը Հիւզարթի գործողութիւններուն մէջ: Այսինքն՝ լիբանանեան իշխանութեան կարգ մը կառոյցներ դիւրացուցած էին Հիւզարթի վրայ կատարած ընդդիմութեան քայլերը:

# ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 94-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Պատգամախօս՝ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ  
(Հայաստանի արտաքին գործոց նախկին նախարար)

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ՝ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵԿՆԵՑՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

24 Ապրիլ 2009, Երեկոյեան ժամը 8:00-ին, «Էմիլ Լաիուտ» հանդիսասրահին մէջ, Տըպայալէ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ